



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ. 6 00 47, E-mail zovunigjuxapetaran@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2013 թվականի No 54

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ

### ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Զովունի գյուղի բնակչ Մարտին Մուխայելի Եղիազարյանի դիմումը իր ընտանիքին սեփականաշնորված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.1հա մակերեսով տնամերձ հողամասին կից 150 քմ հողամասը, որը մինչ օրս փաստացի օգտագործվում է իրենց ընտանիքի կողմից, սեփականության իրավունքով անհատույց իր ընտանիքին տրամադրելու մասին *որոշում եմ*։

Զովունի գյուղի բնակիչ Մարտին Մուխայելի Եղիազարյանի ընտանիքին սեփականաշնորված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.1հա մակերեսով հողամասին կից և իրենց կողմից մինչ օրս օգտագործվող 150 քմ մակերեսով ավել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Մարտին Մուխայելի Եղիազարյանին և իր ընտանիքի անդամներին՝ Ոսկի Բեզլարի Եղիազարյանին, Վիկտորիա Մուխայելի Եղիազարյանին, Նազիկ Վանյայի Եղիազարյանին, Մարտին Մուխայելի Եղիազարյանին, Անուշ Մարտինի Եղիազարյանին, Սաթենիկ Մարտինի Եղիազարյանին, Նունե Մարտինի Եղիազարյանին քանի որ նշված հողակտորը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակության օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հաղամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնազիտական, պատմամշակութային հուշարձանների պաշտպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում :

ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԵՐՇԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ